

# Հիսուսը կիսվում էր ավետարանով

Մարդիկ քաղցած են, երբ նրանց մարմինը սննդի կարիք ունի: Նրանք քաղցում են մի ուրիշ ձևով, երբ նրանք կարիք ունեն լսելու ավետարանը:

Մի օր հազարավոր մարդիկ եկան տեսնելու Հիսուսին: Հիսուսը կերակրեց նրանց ընդամենը հինգ հացով և մի քանի ձկով:

Հաջորդ օրը մարդիկ կրկին եկան Հիսուսի մոտ: Հիսուսը պատվիրեց նրանց մեկ ուրիշ տեսակի հաց փնտրել: «Ես եմ կյանքի հացը»,- ասաց նա: Եթե մարդիկ գտնեն Նրան և Նրա ավետարանը, նրանց հոգիները երբեք չեն քաղցի:

**Այս պատմությունը կարող եք կարդալ Հովհաննես 6.5–13, 22–35 հատվածներում:**

## ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ՕԳՆԵԼ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ ՍՈՎՈՐԵԼ ՀԻՍՈՒՍԻ ՄԱՍԻՆ:

- Ո՞ւմ կարող եք օգնել սովորել Հիսուսի մասին:
- Աղոթեք և ծրագիր կազմեք՝ օգնելու ինչ-որ մեկին սովորել Հիսուսի մասին:



- Հետևե՛ք ձեր ծրագրին:

Կտրեք այս քարտը՝ ի հիշեցում, որ դուք պետք է շարունակեք օգնել ուրիշներին Հիսուսի օրինակով:



Մի անգամ ես ասացի իմ ընկերոջը. «Ես գնում եմ եկեղեցի և սովորում եմ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի մասին»: Ավելի ուշ նա սկսեց մեզ հետ գալ եկեղեցի: Նա ասաց, որ կկամենար շուտով մկրտվել: Դա ինձ ներքուստ ուրախացրեց:

**Մերի Ի., 8 տարեկան, Յուտա (ԱՄՆ)**

**Ինչպե՞ս եք փորձում լինել Հիսուսի նման՝ օգնելով ուրիշներին: Գրե՛ք և պատմե՛ք մեզ: Դա պարզելու համար՝ տես դարձերեսի շապիկը:**

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՓԻՏԵՐ ՖՐԱՆՑԻՍԻ